ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՔՆՆԱԹԵՐԹԻԿԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Քննաթերթիկը բաղկացած է 40 առաջադրանքից, որոնք, ըստ առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

տեսակը	քանակը	միավորը
ընտրովի պատասխանով	15	15
ինքնուրույն շարադրվող	25	25
ընդամենը	40	40

Առաջադրանքները կազմված են՝ հիմք ընդունելով 5-9-րդ դասարաններում ուսումնասիրվող նյութը (9-րդ դասարանից ներառված են միայն առաջին կիսամյակի նյութերը):

Հայոց լեզվի և գրականության հարցերի համամասնությունը 80/20 է:

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Անհրաժեշտ է տրված տարբերակներից ընտրել մեկը և պատասխանների աղյուսակի համապատասխան վանդակում դնել «X» նշանը: Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

2. Ինքնուրույն շարադրվող առաջադրանքներ (կարճ կամ ընդարձակ)

Հարցերի նմուշներ

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը (փակագծերում նշվածներից որևէ մեկը):

1) *մի-և, թր-ոց, զեղ- (**ջ** կամ **չ**)*
2) *ջղա-ին, սերմացու-ի, լռելյա-ն (**յ** կամ -)*
3) *որպի-ի, փոթորկահույ-, ծխնելույ- (**զ** կամ **ս**)*
4) *հետ-տն, օր-րդ, ռադ- (**յո** կամ **իո**)*

Ո՞ր շարքում *ի* ձայնավորի հնչյունափոխությամբ բառ կա:

1) *ընկերություն, ընչացք, ըմպելիք*
2) *ընչազուրկ, ընկեցիկ, ընկալուչ*
3) *ընդամենը, ընդունայն, ընկրկել*
4) *ընկնել, ըմբոշխնել, ընդոստ*

Ո՞ր շարքի բոլոր բառերն են միմյանց հոմանիշ:

1) *շողոքորթ, քծնող, շաղակրատ*
2) *սերել, ծագել, առաջանալ*
3) *շավիղ, կածան, թավուտ*
4) *ճապաղ, կեղծ, թյուր*

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ոջ* հոլովման:

1) սկեսուր, տերտեր, տալ
2) աներ, խաղընկեր, բուժքույր
3) այգետեր, տեգր, եղբայր
4) տիկին, սկեսրայր, քեռակին

Ո՞ր շարքում թվականի կազմության կամ գրության սխալ *չկա:*

1) վեցերորորդ, քսանիններորորդ, 2-րդ
2) քառորդ, երեսուն, տասերկու
3) վաթսուն, մեկ-երկրորդ, 1-ին
4) երրորդ, 7-ական, ութսուն

Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:

1) նույնչափ, ոմն, մեկմեկու
2) մենք, ամենուրեք, որևէ
3) ոչ ոք, այսինչ, որպեսզի
4) ինչու, իբրև, համայն

Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:

1) *չեմ հավատա, չհուզվեցինք, պարեինք, մեծացրի*
2) *կամեցավ, գրվել է, ունեմ, չի կարծելու*
3) *հուսանք, ասացի, գալիս է, չերգեց*
4) *պատմելու է, դավում են, չի զղջում, խնդրեմ*

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Լիլիթը, աղբյուրի մոտ նստած, ……, նայում էր դրախտի աստղազարդ երկնքին:

1) *և աստղերի հրաբորբ ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տենչանքով*
2) *ականջը դրած նրա բյուրեղյա նվագին*
3) *զարթնեց սոխակների սիրահույզ դայլայլներից*
4) *անհամբեր մի քանի անգամ անցնել-դառնալով աղբյուրի շուրջը*

Ո՞ր նախադասության մեջ բութ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1) Հայ գիրը ի մի հավաքեց մեր ցիրուցան մասնիկները ինչպես սրինգը գառնուկներին կամ լաստը նավաբեկյալներին:
2) Վաղուց մարել են այն ծափերը որոնք ի պատիվ Արտավազդ արքայի հեղինակած թատերախաղի դղրդում էին Արտաշատի հոյակերտ կամարների տակ:
3) Օվկիանոսներ և մայրցամաքներ կամրջելով հայ գրերը իրար կապեցին մեր աշխարհասփյուռ հատվածները և բերին հանգուցեցին մայր հայրենիքին:

4) Մեսրոպյան գիրն էր որ պահեց պահպանեց մեր ոգին այն ամենը ինչ բարձրացնում է մեզ բոլոր բարձրերին հավասարեցնելով:

Ո՞ր նախադասության մեջ համեմատություն կա:

1) Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը. թվում էր՝ այդպես պիտի գնային մինչև մութ երկինքը:
2) Մեր բաժի՛ն աստված, քո սիրտն էլ քար էր, Որ մեզ քարերը տվիր նվեր...
3) Օհան ապերը չոր ցախերը դարսում էր բուխարիկում, պառկում կրակի առաջ և նայում, թե ինչպես են մոխրանում փայտի կտորները:
4) Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում:

Ո՞ր պնդումն է ճիշտ Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի վերաբերյալ:

1) Սիմոնը ձիու հետ վերադառնում է գյուղ:
2) Ձին վերցնում են՝ ռազմաճակատ տանելու համար:
3) Սիմոնի պատճառած վերքերից ձին սատկում է:
4) Կոստանդ աղան ձին իրեն է վերցնում:

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմում ինչպե՞ս է Թմկա տիրուհին դավում իր ամուսնուն:

1) Խնջույքի ժամանակ հարբեցնում է զինվորներին:
2) Թշնամուն ցույց է տալիս բերդի գաղտնի մուտքը:
3) Սպանում է դարպասը հսկող զինվորներին:
4) Ձորքին թունավորված սնունդ է մատուցում:

Լրացնել բաց թողնված բառը:

Բարձրանամ կապույտ գահը լեռների՝
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-
Հագնեմ ծիրանին .....,-
Գարնան թագավոր ինձ թագադրեմ...

Գրել, թե տրված բառերից որը ինչ խոսքի մաս է:

երջանկություն _____,

կա _____,

արագ _____,

թիկնեղ _____:

Կազմել մեկ պարզ ընդարձակ նախադասություն:

_____

Գտնել նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղել:

Աղբյուրն արդեն ցամաքել էր, խողովակներից այլևս ջուր չէր ծորում, սակայն տեղի բնակիչները հնամենի հուշաքարի մասին խոսելիս ավանդության ուժով աղբյուր էին ասում:

Պատասխան՝ *սխալ է՝* _____

պետք է լինի՝ _____

Գտնել նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղել:

Նա վարագույրը ցած թողեց մինչև լուսամուտագոգը և խնդրեց նկարչին, որպեսզի անցնի մյուս սենյակը:

Պատասխան՝ *սխալ է՝* _____

պետք է լինի՝ _____

Տրված բառերը տեղադրել բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Ահա թե ..... վերջացավ այս ամենը, բայց այսպես թե այնպես նրա մեջ մի ինչ-որ բան կար, որը ..... ոչ ոք չի կարող մոռանալ. ինչ ուզում ես ....., նա արդեն ..... լեգենդ:

(դառնալ, ասել, ինչ, ես)

Պատասխան՝ *1.*_____ *2.* _____

3. _____ *4.* _____

Տեքստի սկիզբը բաց է թողնված: Կարդալ տեքստը և բովանդակությանը համապատասխան ավելացնել 2-3 նախադասություն՝ որպես սկիզբ (նվազագույնը 20 բառով):

..... Մենք Ատլանտյան օվկիանոսի մյուս կողմը հազարավոր զինվորներ էինք ուղարկում, իսկ դրա համար փող էր հարկավոր: Մեզ կոչ էին անում նաև պատերազմի նա-մականիշներ գնել: Ուսուցչուհին ավելացրեց, որ մենք՝ երեխաներս, նույնպես զինվորներ ենք, ինչպես համազգեստ հագած տղամարդիկ: Եվ մենք այդպես էլ ապրում էինք՝ ամեն ինչ խնայելով:

_____

_____